27.04.23 - 28.04.23
09:00
Անցանց
Գրանցումը բաց է
☑

Պահպանել Google օրացույցում
Երևանի պետական համալսարան

ԵԼՀ գերմանական բանասիրության ամբիոնը հրավիրում է մասնակցելու «Նոր մարտահրավերներ կրթական համակարգում և լեզվական նոր իրականություն» միջազգային միջգիտակարգային գիտաժողովին, որը տեղի կունենա **ս.թ. ապրիլի 27-28-ը Երևանի պետական համալսարանում**:

Գիտաժողովը նվիրված է գլոբալիզացված աշխարհում կրթության արդի խնդիրներին, մասնավորապես գերմաներենին: Գիտաժողովի նպատակն է հաստատել միջգիտակարգային կապ լեզվի, գրականության, հասարակության և քաղաքականության միջև, քանի որ բանասիրական ուղղվածությամբ գերմաներենը, բուհերում մրցակցելով այլ լեզուների հետ, բախվում է կրթական ոլորտում և աշխատանքային շուկայում նոր խնդիրների:

Գիտաժողովն ընդգրկում է հետևյալ բաժինները՝

- մանկավարժություն,

- լեզվաբանություն,

- միջմշակութային հաղորդակցություն,

- մշակութաբանություն,

- թարգմանաբանություն,

- դասավանդման մեթոդաբանություն և դիդակտիկա,

- քաղաքագիտություն և հասարակագիտություն,

- իրավագիտություն և տնտեսագիտություն:

Գիտաժողովի աշխատանքային լեզուն գերմաներենն է: Զեկույցների թեմաները և թեզիսներն անհրաժեշտ է ուղարկել d.philologie@ysu.am էլհասցեին՝ նշելով անունը, ազգանունը, կոչումը, բարձրագույն ուսումնական հաստատությունը և հեռախոսահամարը: Հայտերի ներկայացման **վերջնաժամկետն է ս.թ. ապրիլի 10-**

ը, թեզիսների ներկայացման վերջնաժամկետը՝ ս. թ. ապրիլի 15-ը:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am